

ԽՐԱՏ ՈՒՂԻՂ ՀԱՄԱՏՔԻ ՀԱՄԱՐ

Տէրունական խրատին հետեւելով, որ պարգեւատէր եւ բազմառատ բարեբա- րութեան համաձայն բոլորին կու տայ եւ ոչ ոք կը գրկէ, ինչպէս որ ըսաւ՝ «Խնդ- րողը պիտի ստանայ, փնտոողը պիտի գտնէ» (Մտ. 7.8), որ նաեւ իմանալին իբրեւ գիտութեան հաց եւ իմաստութեան գինի գեղեցկապէս մատակարարեց անոր քաղցը ունեցող բանական անձերուն քա- րոզիչներու բարձրաձայն հրաւերով հոգեւոր խրախնամքի կոչեց՝ առակողին համաձայն, մեզի ալ նոյնը իբրեւ օրէնք տուաւ ըսելով՝ «Յթէ մէկը քեզմէ բան մը խնդրէ՛ տո՛ւր» (Մտ. 5.42):

Յթէ լաւ է կարօտեալներուն պէտքե- րը հոգալ, որուն փոխարէն խոստացաւ աշխարհի սկիզբէն պատրաստուած ար- քայութիւնը տալ, որչափ աւելի գովելի է լիացնել բարիքներէ աղքատ հոգիները: Այնքան աւելի, որքան նախապատիւ, մեծ եւ պատուական է հոգին՝ քան մարմինը, պատկեր ըլլալով աստուածայինին, մինչ մարմինը երկրորդական եւ հողանիւթ է, գոր Տէրն ալ գործով յայտնեց. որով- հետեւ գրուած է՝ թէ Իրեն հետեւող ժողո- վուրդը միայն երկու անգամ հացով կերակրեց, բայց կենարար խօսքին վարդապետութեամբ, որ հոգիներու կերակուրն է, համաձայն այն խօսքին՝ «Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ՝ Աստուծոյ բոլոր խօսքերով» (Բ. օր 8.3) միշտ անոնց հոգիները կը կերակրէր: Նաեւ, իմաստուն ծառային առակով պա- տուիրեց միշտ ժամանակին տալ ծառա- յակիցներուն կերակուրը եւ դեռ, կրկնա- պատիկ քանքարներ շահողին եւ զլա- ցողին օրինակով նոյնը ցոյց տուաւ՝ թէ պէտք է տալ ամէն անոր, որ կը խնդրէ (Մտ. 24.45-51, 2):

ԲԱՆԿԱԼ

Երբ եկեղեցի կը մտնենք, առաջին հերթին նախամուտին կը տեսնենք երկու փոքր սենեակներ տեղադրուած աջին եւ ձախին:


Այս սենեակները կը ծառայեն մոմավաճառութեան, հոգեհան- գիստներու արձանագրութեան, իւ- ղագինի եւ այլ սրտաբուխ նուիրա- տուութիւններու գանձումներուն:

Այս սենեակները կը կոչուին բանկալ, որոնցմէ մեկուն բացուած պատուհանի եզրին դրուած կ'ըլլան մոմեր եւ պնակներ, եւ որոնց մէջ բարեպաշտ հաւատացեալներ իրենց լուման կը գետեղեն որպէս մոմա- գին եւ որպէս նուէր եկեղեցւոյ պայծառութեան:

Արտօնեալ սովորութիւն դար- ձած է բանկալի մէջ վաճառել նաեւ կրօնական հրատարակութիւններ, անոնք ըլլան գիրք, եկեղեցւոյ լրատու կամ օրացոյց:

Բանկալին մէջ ծառայող նուիրեալները, աշաւուրջ կերպով պէտք է հսկեն հաւատացեալներու կողմէ վառուած մոմերուն, հալած մոմերը հանելով եւ տեղ բանալով եկեղեցի նոր ժամանող հաւատացեալներու մոմավառութեան:

Շարունակելի



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԶԱՒԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՀ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 3 ԱՂՈՒԼ 2022

ԹԻՒ 14

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 66.1-24: Կղ. 2.8-3.17: Ստթ. 22.24-23.39

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԷՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄՍՏԹԵՈՍԻ 22.24-23.39

Երբ փարիսեցիները լսեցին, թէ Յիսուս Սաղուկեցիները պապանձեցուց, ի- րարու քով եկան: Անոնցմէ մէկը, օրէնագէտ մը, Յիսուսը փորձելու համար հար- ցուց. «Վարդապետ, Օրէնքին մէջ ո՞րն է մեծագոյն պատուիրանը»: Յիսուս ըսաւ անոր. «Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ միտքովդ: Ասիկա է մեծագոյն եւ առաջին պատուիրանը: Երկրորդը ասոր նման է. Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս: Այս երկու պատուիրաններէն կախեալ են ամ- բողջ Օրէնքը եւ մարգարէութիւնը»:

Երբ Փարիսեցիները հաւաքուեցան, Յիսուս հարցուց անոնց. «Ի՞նչ կը խոր- հիք Քրիստոսի՝ խոստացուած Փրկիչին մասին: Որո՞ւն որդին է ան»: Անոնք պա- տասխանեցին. «Դաւիթի»: Յիսուս ըսաւ անոնց. «Բայց ինչպէ՞ս Դաւիթ Ս. Հո- գիով ներշնչուած՝ զայն Տէր կը կոչէ ու կ'ըսէ. «Տէրը իմ Տիրոջս ըսաւ. աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերոդ տակ դնեմ՝ որպէս պատուանդան»: «Արդ, եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս անոր որդին կ'ըլլայ»: Ոչ որ կրցաւ պա- տասխան տալ Յիսուսի եւ այդ օրուանէ սկսեալ ռեւէ մէկը չէր համարձակել իրեն հարցում ուղղել:

Ապա Յիսուս ժողովուրդին եւ իր աշակերտներուն ըսաւ. «Մովսէսի աթոռը նըս- տան օրէնքի ուսուցիչներն ու փարիսեցիները: Իրենց ըսածներուն հնազանդեցէ՛ք եւ կատարեցէ՛ք զանոնք, սակայն մի՛ ընէք ինչ որ իրենք կ'ընեն, որովհետեւ ա- նոնք կը սորվեցնեն, բայց չեն կատարեր: Անոնք ծանր եւ դժուարակիր բեռներ կը դնեն մարդոց ուսերուն, մինչ իրենք նոյն բեռները կրելու նուազագոյն ճիգն իսկ չեն ընէր: Ինչ որ կ'ընեն՝ մարդոց երեւելու համար կ'ընեն: Իրենց գրպանակ- ները կը լայնցնեն եւ իրենց հագուստներուն ծոպերը կ'երկնցնեն: Ընթրիքներու ընթացքին պատուոյ տեղերը գրաւել կը սիրեն եւ ժողովարաններու մէջ՝ առաջին աթոռները: Կը սիրեն հրապարակներու վրայ մարդոցմէ բարեւներ ընդունիլ եւ «Վարդապետ», այսինքն «Ուսուցիչ» կոչուիլ: Բայց դուք ռեւէ մէկը «Վարդա- պետ» մի՛ կոչէք, որովհետեւ դուք բոլորդ եղբայրներ էք եւ մէկ ուսուցիչ ունիք: Երկրի վրայ ռեւէ մէկը «հայր» մի՛ կոչէք, որովհետեւ դուք մէկ Հայր ունիք, որ եր- կինքի մէջ է: «Առաջնորդ» մի՛ կոչուիք, որովհետեւ ձեր միակ առաջնորդը Քրիս- տոս է: Ձեր մէջէն մեծը թող ձեր սպասաւորը ըլլայ: Ով որ իր անձը կը բարձ- րացնէ՝ պիտի խոնարհի եւ ով որ իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ

Հայ եկեղեցին Գրիգոր Լուսավորիչը սուրբ դասած է, իսկ Ընդհանրական եկեղեցին գայն դասած է մեծ սուրբերու շարքին: Ան կոչուած է «Հայոց Մկրտիչ», «Երկրորդ Լուսավորիչ Հայոց» (Թադէոս եւ Բարթողիմէոս առաքեալներէն ետք):

Գրիգոր Լուսավորիչ Հայոց առաջին եպիսկոպոսապետն է 302 թուականէն ի վեր եւ նկատուած է համաքրիստոնէական սուրբ, որուն տօնը կը տօնուի: Ս. Գրիգոր Պարթեւական տունէն էր: Երբ իր հայրը՝ Անակ Պարթեւ, սպաննեց Հայոց Խոսրով թագաւորը, իշխաններու վրէժխնդրութենէն փրկելու համար դայեակները մանուկը Կեսարիա փախցուցին: Հոն շուտով մկրտեցին զինք Գրիգորիոս անունով: Նոյն ֆաղափն մէջ ան ուսանեցաւ ու բարձրագոյն կրթութիւնը ստացաւ: Չափահաս դառնալէ ետք ամուսնացաւ կեսարացի Դաւիթի աղջկան՝ Մարիամի հետ: Երկու զաւակներ (Վրթանէս ու Արիստակէս ապագայ հայոց կաթողիկոսներ՝ Արիստակէս Ա. Պարթեւ եւ Վրթանէս Ա. Պարթեւ) ունենալէ ետք, անոնք իրարմէ կը բաժնուին: Գրիգորը կը մտնէ արժունի ծառայութիւն, իսկ Մարիամը կրտսեր զաւակին հետ կը ֆաշուի կուսանոց, աւագ որդին ինամատարին յանձնելով: Երբ Գրիգորը կը լսէ իր հօր կատարածը, Խոսրով արքայի զաւակին՝ Տրդատ արքայի մօտ ծառայութեան կը մտնէ, առանց ըսելու թէ ո՞վ է ինք: 276-ին, երբ պարսիկներու Վռամ թագաւորը կը գրաւէ Հայաստանը, Գրիգոր Պարթեւը՝ Տրդատ Գ. Մեծին հետ կ'երթայ հռոմէական կայսրութիւն: 287-ին տիրանալով իր հօր գահին՝ Տրդատ Գ. Մեծը, իր յաղթանակին առիթով, եկեղեցաց գաւառի Երիզա աւանին մօտ՝ Անահիտի մեհեանին մէջ գոհութեան տօնախմբութիւն կը կազմակերպէ: Հայոց թագաւորը, քրիստոնէայ պալատականներուն, որոնց շարքին նաեւ Գրիգոր, կը հրամայէ մասնակցիլ պաշտամունքին եւ երկրպագել Անահիտ աստուածուհիի բազմին:

Գրիգոր կը մերժէ առաջարկը: Տրդատ Մեծի հրամանով գայն կը նետեն մահապարտներուն բանտը՝ Խոր Վիրապ, որ թունաւոր օճերով լեցուն էր, եւ ուրկէ ոչ ոք կրցած էր ազատիլ:

Անոր հրամանով Գրիգոր Պարթեւի բանտարկութեան վերջին տարին՝ 301 թուականին, Սուրբ Հռիփսիմեանց եւ Գայրաթեան 37 կոյսերը նահատակուեցան Վաղարշապատ ֆաղափի մօտերը: Ս. Հռիփսիմեանց կոյսերու նահատակութենէն ետք Տրդատ արքան կը պատժուի: Դիւահար թագաւորը վայրի խոզի նման կը դառնայ եւ եղեգնուտերու մէջ կը մտնէ: Պատիժէն զերծ մնացած իր ֆոյրը՝ Խոսրովիդուխտը տեսիլք մը կը տեսնէ, որ կը կրկնուի հինգ անգամ, ըստ որուն միայն Գրիգորը կրնար բուժել դիւահար թագաւորը: Խոսրովիդուխտի խնամակալ՝ Օտա Ամատունին, Գրիգորը հանդիսաւոր շուքով Խոր Վիրապէն Վաղարշապատ կը բերէ: Ապա, արքային աղաչանքը տեսնելով, Աստուծմէ ստացած իր գորութեամբ կը բժշկէ Տրդատ Մեծը եւ բոլոր դիւահար պալատականները: Տեսիլքին մէջ Սուրբ Գրիգորին կը յայտնուի կոյսերուն վկայարաններուն վայրը: Դարձի եկած արքան հրաման կու տայ, որ բոլոր քրիստոնէաներուն դէմ հալածանքը դադարի եւ ժողովուրդը ազատօրէն պաշտէ Գրիստոսի սուրբ հաւատքը: Եւ այսպիսով, Տրդատ Գ. Մեծը 301 թուականին աշխարհի մէջ առաջին անգամ ըլլալով, քրիստոնէութիւնը Հայաստանի պետական կրօնը կը հռչակէ: 302 թուականի սկիզբը, 16 նախարարներու ընկերակցութեամբ եւ թագաւորական հրովարտակով, Գրիգորը Կեսարիա կը մեկնի, ուր Հայոց հայրապետ կը ձեռնադրուի:

6 Յունուար, 303-ին առաւօտեան Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին օրը, Արածանի գետի ակունքին մօտ, Նպատ լեռան ստորոտին, Գրիգոր կը մկրտուէ Տրդատ Գ. Մեծը ու ամբողջ արժունի աւագանին: Նոյն տեղը, եօթը օրերու ընթացքին ան կը մկրտուէ նաեւ արժունի գորգն ու ժողովուրդը: 303-ին սկիզբը, արքան ու հայրապետը մայրաքաղաք՝ Վաղարշապատ կը վերադառնան եւ Գրիգոր Լուսավորիչ՝ իր տեսիլքին համաձայն, արժունի գահին մօտ Միածնի իջած վայրին վրան հեթանոսական մեհեանին տեղը կը կառուցէ Էջմիածնի (Էջ Միածնի) Տաճարը, ուր կը հաստատուի Հայոց Առաքելական Աթոռը, իսկ Էջմիածին Տաճարը կը դառնայ հայոց առաջին եկեղեցին:

## Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

### ԱՌՎՆՁՆԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՂՕԹԵՆԸ ՄԵՂԱՐՈՐՆԵՐՈՒՄՆ ԿՆԱՄԻ

Իսկ ինք քարընկէց մը հեռացաւ անոնցմէ, ծունկի եկաւ եւ աղօթեցեց (Ղկ. 22.41): Ինչո՞ւ Յիսուս չաղօթեց իր աշակերտներուն ներկայութեան: Ումանք կը կարծեն, որ Յիսուս քարընկէց մը հեռացաւ եւ աղօթեց, որովհետեւ չէր ուզեր, որ աշակերտները զինք տեսնէին արիւն-քրտինքի մէջ, իսկ ուրիշներ կը խորհին, որ Յիսուս աշակերտներէն հեռացաւ, որովհետեւ չէր փափաքէր տառապանքի բաժակին հեռացումը խնդրել իր աշակերտներուն ներկայութեան: Ըստ ինձի, տրուած երկու պատճառներն ալ ճիշդ չեն: Յիսուս քարընկէց մը հեռացաւ անոնցմէ, որովհետեւ ան իբրեւ ներկայացուցիչը մեղաւոր մարդկութեան, չէր կրնար ուրիշ մարդոց հետ միասին այդ աղօթքը ընել: Ան պէտք էր առանձինը ներկայանար իր Հօրը:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ՊԱՍԸ

Երբեմն պատրաստ պէտք է ըլլանք առանձին կանգնելու Աստուծոյ առջեւ եւ Յիսուսի նման արիւնախառն արցունք եւ քրտինք հոսեցնելու մեղաւոր մարդկութեան փրկութեան համար:

### ԱՌԱՎ 2.7-8

Տէրն է, որ կուտայ իմաստութիւնը, եւ գիտութիւնն ու հանճարը անոր ներկայութեան կը գտնուին:

Ան արդարներուն փրկութիւն կը վերապահէ եւ հովանաւոր կը դառնայ անոնց քայլերուն:

## ԵՅԵ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

### ԵՐԲ ՀԻՄՆՎՈՒԹԵԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՄՆ ԿՈՒՉԵՍ, ԿԱՐԿԱ՝ Սաղմոս 6

Տէ՛ր, գայրոյթիդ մէջ մի՛ յանդիմաներ զիս, բարկութեանդ մէջ մի՛ պատժեր զիս:

Ողորմէ՛ ինձի Տէ՛ր, տկար եմ ես.

Բժշկէ՛ զիս, որովհետեւ մի՛նչեւ ոսկորներս կը դողամ:

Հոգիս ծանր խոռովի մէջ է. մի՛նչեւ ե՞րբ, Տէ՛ր:

Դարձի՛ր, Տէ՛ր, եւ փրկէ՛ զիս. ազատէ՛ զիս մահուանէն, որովհետեւ ողորմած եմ:

Որովհետեւ մահուան մէջ ո՞վ պիտի յիշէ քեզ. անդրաշխարհին մէջ ո՞վ շնորհակալութիւն պիտի յայտնէ քեզի:

Հեծեծելէն յոգնեցայ, ամէն գիշեր եւ լացով լուացի իմ մահինս, եւ իմ արցունքներովս թրջեցի անկողինս:

Աչքս մաշեցաւ ողբալէն, տկարացաւ նեղութիւններէս:

Հեռացէ՛ք ինձմէ դուք բոլորդ, որ անիրաւութիւն կը գործէք, որովհետեւ Տէ՛ր լսեց իմ աղօթքս, եւ խնդրանքս ընդունեց:

Թող ամչնան ու սարսափի մատնուին բոլոր թշնամիներս. ամօթով մնան եւ իսկոյն հեռանան:

### ՊԱՆԵՑՈՂՈՒԹԻՒՄՆ

Պահեցողութիւնը դէռի նման է: Ինչպէս դէռը օգտակար կը դառնայ մեզի, եթէ զիտնանք գայն գործածելու կերպը, եւ կը վնասէ մեզի, եթէ չզիտնանք գայն գործածելու կերպը, նոյնպէս ալ, պահքը թէւ շատ օգտակար կը դառնայ մեզի, բայց եթէ գայն կիրարկելու կերպը չզիտնանք՝ մեծ վնասներ կը կրենք:

(Յովհան Ոսկեբերան)